Լևոն Միրիջանյանի անվան թիվ 155 հիմնական դպրոց

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա ***Անգլերեն***

Մասնակից **Լ. Քեյան**

Ղեկավար **Մանուշակ Պետրոսյան**

Թեմա **ՏՀՏ գործիքների կիրառումը որպես դասի արդյունավետությունը բարձրացնող միջոց**

Երևան, 2022թ.

Բովանդակություն

Ներածություն ----------3-4

ՏՀՏ գործիքների կիրառումը որպես դասի արդյունավետությունը բարձրացնող միջոց
-- 4-6

Լսել, ընթերցել և գրել համացանցի միջոցով ---------- 6

Համացանցը՝ հաղորդակցության միջոց ---------- 7

Անգլերենի իմացությունը զարգացնող կայքեր ---------- 7-11

Օտար լեզվի արդի ուսուցման մեթոդներ ---------- 11-13

Խմբային նախագծի կազմակերպում ---------- 14-15

Եզրակացություն16

Օգտագործված գրականության ցանկ ---------- 17

Ներածություն

Օտար լեզուները հրաշք են – մեծերից մեկն ասել է, որ մեր իմացած յուրաքանչյուր լեզու մեզ մեկ այլ զույգ աչք է ավելացնում: Լեզուն այն մարդկանցից է, ինչը մեզ մարդ է դարձնում և տարբերում կենդանիներից: Օտար լեզվի իմացությունը ժամանակի անհրաժեշտություն է: Ավելին, Նելսոն Մանդելան ասել է. *«Եթե մարդու հետ խոսում ես այն լեզվով, որը նա հասկանում է, ապա խոսում ես նրա գլխի հետ: Եթե մարդու հետ խոսում ես նրա մայրենի լեզվով, ապա խոսում ես նրա սրտի հետ»:*

Մարդկության զարգացման ներկա փուլում նորարարական տեխնոլոգիաները կարևոր և հատուկ տեղ են գրավում կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Հատկապես վերջերս կրթական գործընթացում համացանցի ներդրման և օգտագործման անհրաժեշտությունը մեծանում է, քանի որ կրթության մեջ համացանցային տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունները հիմնականում որոշվում են ոչ թե տեխնիկական բնութագրերով, այլ բովանդակությամբ և մեթոդական բովանդակությամբ: Այսինքն՝ ոչ միայն նոր տեխնիկա, այլև նոր դասավանդման ձևեր, նոր մեթոդներ, դասավանդման նոր մոտեցում: Օտար լեզվի ուսուցման գլխավոր նպատակը սովորողի հաղորդակցության մշակույթի ձևավորումն է, օտար լեզվի գործնական տիրապետումը: Ուսուցչի խնդիրն է՝ յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որ յուրաքանչյուրին հնարավորություն կտա ցուցաբերել ակտիվություն և ստեղծագործական միտք:

Անգլերեն լեզվի դասավանդման ժամանակ ուսուցանող համակարգչային ծրագրերի աշխատանքային ձևերը ներառում են.

- *Բառապաշարի ուսուցում,*
- *Աշխատանք արտասանության հետ,*
- *Երիկխոսության և մենախոսության ուսուցում,*
- *Գրավոր աշխատանք կատարելու ուսուցում:*

Համացանցի՝ մեզ տրամադրվող ռեսուրսները հսկայական են: Օտար լեզվի դասի ժամանակ համացանցի շնորհիվ լուծվում է դիդակտիկ շատ խնդիրներ. ընթերցանության և գրելու հմտության ձևավորում՝ օգտագործելով համացանցի նյութերը սովորողի մոտ օտար լեզուն սովորելու ցանկության առաջացում: Բացի այդ, աշխատանքն ուղղված է համացանց - տեխնոլոգիաների հնարավորությունների ուսումնասիրությանը, որը թույլ է տալիս սովորողներին լայնացնել իրենց մտահորիզոնը, հարաբերություններ հաստատել ու ամրապնդել դրանք անգլալեզու երկրներում ապրող իրենց հասակակիցների և լեզվակիրների հետ:

Սովորողները կարող են մասնակցել առցանց անցկացվող թեստերին, վիկտորինաներին, մրցույթներին, օլիմպիադաներին, կարող են նամակագրական կապեր հաստատել ուրիշ երկրներում ապրող իրենց հասակակիցների հետ, մասնակցել առցանց հաղորդակցությանը(չաթին), վիդեոկոնֆերանսներին և այլն: Սովորողները կարող են ինֆորմացիա ստանալ այն խնդիրների մասին, որոնք առկա են իրենց կողմից իրականացվող նախագծերում: Նախագծերը կարող են հանդես գալ նաև խմբային աշխատանքների տեսքով, որի անդամները տարբեր դպրոցներից են կամ էլ տարբեր քաղաքներից ու երկրներից:

Նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաները անգլերենի լեզվի ուսուցման մեջ

Ուսուցման թվայնացումն անխտիր կապված է այն փաստի հետ, որ համակարգիչը հանդիսանում է մտավոր զարգացման աղբյուր իր բոլոր առումներով: Ռ. Վիլյամը և Կ.Մակլին իրենց *«Համակարգիչը դպրոցում»* հոդվածի մեջ գրում են. *«Համակարգիչն ունի մի յուրահատկություն, որն ի հայտ է գալիս այն ուրիշին որպես ուսուցանելու գործիք օգտագործելիս, և նրա «անշունչ (անհոգի)»* լինելն իրեն լավ օգնական է

դարձնում գիտելիքներ ձեռք բերելու հարցում: Այս սարքը կարող է շատ «սիրալիր» կերպով շփվել օգտվողի հետ և նույնիսկ որոշ պահերի ըմբռնումով մոտենալ և երբեք չբարկանալ և ցույց չտալ, որ ձանձրույթ է զգում, օրինակ նույն արտահայտությունը բազմաթիվ անգամներ կրկնելուց»: Այս իմաստով անհատական ուսուցման մեջ համակարգչի օգտագործումն ամենաօգտակար ձևերից մեկն է:

Անգլերեն լեզվի ուսուցման հիմնական նպատակը հաղորդակցության հմտությունների ձևավորումն է, իսկ մնացած բոլոր խնդիրները (կրթական, դաստիարակչական, զարգացնող) լուծվում են գլխավոր նպատակի իրականացման ճանապարհին: Առաջնային նշանակությունը տրվում է նյութն ընկալելուն, բովանդակության փոխանցմանը և իմաստի արտահայտմանը, որն էլ տանում է լեզվի քերականական կառույցների և բառերի անուղղակի ուսուցմանը: Վերջիններս սովորողը յուրացնում է անընդհատ շփման ընթացքում՝ առանց կենտրոնանալու քերականական կանոնները պարզապես անգիր անելու վրա: Որպես ինֆորմացիոն համակարգ, համացանցն իր օգտատերերին առաջարկում է ինֆորմացիայի և պաշարների հսկայական տեսականի.

- ✓ *Էլեկտրոնային փոստ (e-mail),*
- ✓ *տելեկոնֆերանսներ (usenet), վիդեոկոնֆերանսներ*
- ✓ *Անձնական ինֆորմացիա հրապարակելու, անձնական էջ ստեղծելու և համացանցում տեղադրելու հնարավորություն,*
- ✓ *Տեղեկատվական կատալոգ (Yahoo, InfoSeek/UltraSmart, LookSmart, Galaxy),*
- ✓ *Փնտրողական համակարգեր (Alta Vista, HotBob, Open Text, WebCrawler, Excite),*
- ✓ *Առցանց հաղորդակցություն (Chat):*

Այս բոլոր պաշարները կարող են օգտագործվել դասի ընթացքում:

Հաղորդակցական և միջմշակութային հաղորդակցության հմտություններ ձեռք բերելն անհնարին է առանց հաղորդակցության պրակտիկայի և համացանցի պաշարների օգտագուրծումը օտար լեզվի դասի ընթացքում պարզապես դառնում է անհրաժեշտություն: Համացանցի վիրտուալ միջավայրը թույլ է տալիս դուրս գալ

ժամանակի և տարածության հասկացությունների սահմաններից և կենդանի շփում է ապահովում իր օգտատերերի համար:

Էլեկտրոնային դասագրքերը, գրադարանները, պատկերասրահները անգնահատելի օգնություն են ցուցաբերում լեզվական և մշակութային տարբեր թեմաների ուսումնասիրման գործում: Մուլտիմեդիա տեխնոլոգիաների հնարավորությունները թույլ են տալիս ուսանողին սուզվել վիրտուալ աշխարհում և տեսնել այն, ինչ կարելի է գրել միայն գրքում: Էլեկտրոնային պատկերասրահները թույլ են տալիս դիտել մեծ նկարիչների աշխատանքները՝ առանց տեղից հեռանալու, իսկ երկրների գրադարանները թույլ են տալիս այցելել աշխարհի բոլոր վայրերը: Այս ամենը օգտակար կլինի ոչ միայն դասին, այլև հետագա կյանքում:

Լսել, ընթերցել և գրել համացանցի միջոցով

Համացանցը հիանալի միջոց է աշխարհում կատարվելիք անցուդարձին հետևելու համար: Այն հնարավորություն է տալիս դասասենյակը վերածել նորությունների գործակալության, իսկ սովորողներին՝ առաջնակարգ լրագրողների: Գործունեության այսպիսի տեսակը շատ հարմար է ավագ դասարանների համար, քանի որ ներառում է կարդալու մեծածավալ նյութեր, ընթերցանության արվեստ և խոսելու հմություն: Սովորողներին կարելի է առաջարկել խմբային աշխատանք, օրինակ՝ հետազոտական աշխատանք կատարել, որոնք կներառեն առօրյա կյանքի բոլոր ոլորտները. թարգմանություններ, սպորտ, եղանակ, մշակույթ և այլն:

Այժմ գոյություն ունի ժամանակակից մուլտիմեդիա դասագրքերի լայն տեսականի, որոնք լայնածավալ վարժություններ են իրականացնում բոլոր տարիքի և տարբեր մակարդակի գիտելիքների սովորողների համար: Հնչյունաբանական վարժություններ իրականացնելիս մեծ օգնություն են ցուցաբերում *«Պրոֆեսոր Հիգինս» «Անգլերեն առանց առոգանության»* ուսումնական ծրագիրը, ինչպես նաև մի շարք այլ մուլտիմեդիա դասագրքեր: Ձայները, բառերը, արտահայտությունները և նախադասություններն ուսանողներն ընկալում են ականջով և տեսողականորեն:

Ուսանողները հնարավորություն ունեն դիտելու հոդակապի շարժումները համակարգչի էկրանին և լսելու ճիշտ ինտոնացիան:

Այս աշխատանքի առավելությունը դասարանի լիակատար մասնակցությունն ու աշխատանքի ճիշտ բաշխումն է. ուժեղ սովորողներին՝ դժվար հոդվածների հետազոտում, առավել թույլ սովորողներին՝ եղանակի տեսության, մշակույթի ներկայացուցիչների մասին հոդվածներ պատրաստում:

Համացանցը՝ հաղորդակցության միջոց

Համացանցով օտար լեզվի դասավանդմանը ներկայացված նոր պահանջներից մեկն էլ հանդիսանում է համագործակցության ապահովվումը, կամ ինչպես այժմ ընդունված է անվանել՝ ինտերակտիվություն:

Սովորեցնելով տվյալ լեզուն համացանցը նպաստում է խոսելու և արտահայտվելու հմտությունների ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը, քերականություն սովորելուն՝ դարձնելով լեզվի ուսուցումն ավելի արդյունավետ: Համացանցը զարգացնում է սովորողների սոցիալական և հոգեբանական հատկանիշները, նրանց ինքնավստահությունը և կոլլեկտիվում աշխատելու հմտությունները, ստեղծում է բարենպաստ պայմաններ ուսուցման համար՝ հանդիսանալով ինտերակիվ մոտեցման գործիք:

Ինտերնետի օգնությամբ մարդը կարող է շփվել տարբեր երկրների բնակիչների և տարբեր էթնոմշակութային համայնքների ներկայացուցիչների հետ՝ այդպիսով ոչ միայն բարելավելով լեզվի իմացությունը, այլև բարելավելով անգլերեն լեզվի ընկալման հմտությունները տարբեր ազգերի ներկայացուցիչների շրջանում:

Անգլերենի իմացությունը զարգացնող կայքեր

Այժմ համացանցն ունի տեղեկատվական մեծ հնարավորություններ և ոչ պակաս տպավորիչ ծառայություններ: Համացանցը օտար լեզու սովորողների համար ստեղծում է եզակի հնարավորություն տեքստեր օգտագործելու, լսելու և շփվելու մայրենի

խոսնակների հետ: Համացանցի զարգացումով զգալիորեն ավելացել են անգլերեն սովորելու հնարավորությունները: Շնորհիվ այն բանի, որ անգլերենը խոսում են աշխարհի շատ մասերում: Այն լի է անգլերեն տեղեկատվությամբ, որը նույնպես ծառայում է որպես ուսուցման դեր: Հենց համացանցն է համարվում վերջին տասնամյակների տեխնիկական բեկում, որը շատ ուժեղ ազդեցություն է ունեցել կրթական տեխնոլոգիաների զարգացման վրա: Բացի այն, որ ինտերնետում տեղադրված են բազմաթիվ առաջարկություններ և կրթական նյութեր, Համաշխարհային ցանցի տեխնիկական հնարավորությունները հնարավորություն են տալիս ուսուցման դասեր անցկացնել անմիջապես ցանցում: Անգլերեն սովորելու գրեթե բոլոր ուսումնական նյութերը, առցանց թեստերը և մուլտֆիլմերը կարելի է գտնել առցանց: Այս ամենը սովորաբար օգտագործվում է անգլերեն լեզվի ուսումնասիրության մեջ:

Ահա լեզվի ուսուցման ամենահայտնի կայքերը.



DUOLINGO

Duolingo-ն հրաշալի տարբերակ է ինտերակտիվ խաղերի և առաջադրանքների միջոցով անգլերենի բառապաշարը և քերականությունը յուրացնելու համար: Այն սովորեցնում է կարդալ, լսել, հասկանալ և խոսել անգլերեն: Հասանալի է թե կայքի, թե հավելվածի տեսքով: Duolingo-ում դասերը բաժանված են ըստ թեմաների (ուտելիք, ընտանիք, «to be» բայ և այլն): Այստեղ կան նաև բազմաթիվ խորհուրդներ, բացատրություններ: Դասերը հաղթահարելով՝ դուք կարողանում եք ակտիվացնել նորերը, նպատակներ եք դնում ձեր առջև և հերթով իրականացնում դրանք: Այս ծառայությունը ոչ միայն սովորեցնում է անգլերեն, այլև հաջողացնում է մոտիվացնել ձեզ այդ ընթացքում:

LINGUALEO

LinguaLeo պորտալում կարող եք կարդալ հետաքրքիր հոդվածներ, երաժշտություն լսել, սերիալներ դիտել և այս ամենին զուգահեռ՝ յուրացնել անգլերենը, քանի որ այդ ամենից հետո ձեզ տրվում են առաջադրանքներ՝ սովորածը ամրապնդելու համար: LinguaLeo-ն նույնպես օգտագործում է խաղային մեթոդներ: Կայքի գլխավոր հերոսը Լեո անունով առյուծիկն է, ով մշտապես քաղցած է, և դա… գիտելիքների քաղց է: Նրան պետք է անընդհատ կերակրել՝ նորանոր դասեր յուրացնելով: Այստեղ կա նաև սոցիալական ցանց, որտեղ դուք կարող եք ընկերներ ձեռք բերել և շփվել նրանց հետ բացառապես անգլերեն լեզվով:

BRITISH COUNCIL

Սա Բրիտանական խորհրդի կայքն է, իսկական գանձարան անգլերեն սովորելու համար: Այստեղ կարող եք գտնել մեծ ցանկ ինչպես առցանց ռեսուրսների, այնպես էլ հավելվածների: Կայքը ներառում է բազմաթիվ անվճար աուդիո և տեսանյութեր, ինչպես նաև 2000-ից ավելի ինտերակտիվ վարժություններ: Դուք կարող եք գրանցվել, հաղորդակցվել մյուս օգտատերերի հետ և ներբեռնել նյութեր: Բրիտանական խորհրդի կայքն առաջարկում է նաև համապատասխան բաժին 5-12 տարեկան երեխաների համար՝ զվարճալի, ուսուցողական կայք առցանց բառարանով և քերականական խաղերով, երգերով, պատմություններով ու տեսահոլովակներով: Իսկ ահա LearnEnglish Teens կայքը մշակված է հատուկ 13-17 տարեկան պատանիների համար և համապատասխանում է նրանց հետաքրքրություններին:

BUSUU

40 միլիոնից ավելի օգտատեր ունեցող այս սոցիալական ցանցում նոր լեզու սովորելով՝ դուք աճեցնում եք ձեր լեզվի ծառը: Սա խաղային երանգ է հաղորդում ուսուցման ընթացքին: Այստեղ կարող եք գտնել ընկերներ տարբեր երկրներից, որոնք ձեզ կօգնեն բառերի կամ նախադասությունների թարգմանության մեջ: Busuu-ն տրամադրում է նաև օնլայն կուրսեր և բառարան:

MEMRISE



Memrise -ը շատ հետաքրքիր մի կայք է ավելի քան 200 լեզու սովորելու համար: Ուսուցման ընթացքում օգտատիրոջն առաջարկվում է ընտրել «մեմ» բառը ավելի լավ մտապահելու համար կամ ստեղծել սեփական ասոցատիվ պատկերը: Այս ծառայությունը հասանելի է նաև iOS և Android հավելվածների տեսքով: Տարբեր խաղային մեթոդներով մարզվում է ձեր հիշողությունը, տեսողական ընկալումը, արագ մտապահումը:

LEENGOO



Այս կայքը հատկապես նրանց համար է, ովքեր դժվարանում են բառերը մտապահել: Կայքի ստեղծողները կարծում են, որ բառերը հնարավոր է հիշել միայն համապատասխան կոնտեքստում: Այստեղ դուք կարող եք ունենալ ձեր անձնական բառարանը բոլոր անհրաժեշտ

գործառույթներով՝ թարգմանություն, արտաբերություն ձայնային տարբերակով և այլն: Leengoo-ն հետևում է ձեր ուսուցման ընթացքին, առաջարկում է նորից աչքի անցկացնել այն բառերը, որոնք մոռացել եք: Leengoo-ի միջոցով դուք կկսեք հասկանալ անգլերեն բանավոր խոսքը, կարդալ, համալրել բառապաշարը, տեսադասեր դիտել, գրքեր կարդալ՝ նոր կամ անծանոթ բառերը ավելացնելով անձնական բառարանի մեջ: Leengoo-ն ունի նաև բջջային հավելված Android-ի համար:



PUZZLE-ENGLISH

Puzzle English-ը խաղային ռեսուրս է, որի միջոցով կարող եք հասկանալ անգլերեն բանավոր խոսքը, ամրապնդել քերականական գիտելիքները, բարելավել արտասանությունը: Այստեղ կան հարյուրավոր ինտերակտիվ դասեր, ինչպես նաև դասավանդողներ, ովքեր կօգնեն յուրացնել նյութը, գրել, կարդալ, հասկանալ անգլերենի քերականությունը և ճիշտ արտաբերել բառերը: Յուրաքանչյուր փուլ կազմված է տեսական և գործնական մասից: Նախ դուք լսում եք, թե ինչ է ասում դասավանդողը, իսկ հետո ինտերակտիվ թեստի միջոցով կատարում եք առաջադրանքը: Արտահայտությունները, օրինակ, դուք հավաքում եք փազլների միջով: Ամեն փուլն ավարտելուց հետո էլ փոքրիկ քննություն եք հանձնում: Դուք ինքներդ կարող եք ընտրել այն նյութերը, որոնք ուզում եք յուրացնել կամ որոշել դրանց քանակությունը մեկ դասի ընթացքում: Այս ծրագիրը հենց զրոյից կարող է սովորեցնել ձեզ անգլերեն՝ սկսելով այբուբենից:

Օտար լեզվի արդի ուսուցման մեթոդներ

Գոյություն ունի լեզուն ուսումնասիրելու երեք մոտեցում և բոլոր մեթոդները պայմանականորեն բաժանվում են հետևյալ խմբերի.

1. **Քերականական թարգմանության մեթոդ** (The Grammer Translation Method):

Այս մեթոդը մեզ հայտնի է դեռ խորհրդային ժամանակներից, որը հիմնված է գրավոր թարգմանության և ընթերցանության վրա: Այս դեպքում սովորաբար կազմվում են տեքստեր, որոնք ուղղված են որոշ քերականական կանոնների մշակմանը: Հիմքում ընկած են բառուսուցումը, ուղղագրությունը, քերականությունն ու քերականորեն հարուստ տեքստերի գրավոր թարգմանության միջոցով պրակտիկան: Հիմա այս մեթոդն օգտագործվում է մեռած լեզուներն ուսումանսիրելու համար:

2. **Աուդիո – լեզվական մեթոդ** (Audio-lingual method):

Այս մեթոդի էությունը նրանում է, որ սովորողն անընդհատ լսում ու կրկնում է օտար լեզվով ձայնագրությունը:

3. **(Proprioceptive method)**

Մեթոդի նպատակն է միաժամանակ աշխատանքի մեջ ներգրավել ուղեղի ճանաչողական, նյարդաբանական և լսողական ֆունկցիաները: Այս մեթոդի կողմնակիցները պնդում են, որ սովորողն ուսուցման ընթացքում պետք է իր լեզուն, բանավոր խոսքն օգտագործի անընդհատ, նույնիսկ գրավոր առաջադրանքներ կատարելիս: Ֆունկցիոնալ մոտեցում, որտեղ լեզուն հանդիսանում է որոշակի գործառույթների /ֆունկցիաների/ արտահայտման և իրականացման միջոց:

4. **Լեզվի իրավիճակային ուսուցում – Բանավոր մոտեցում** (Situational language teaching(Oral approach):

Հիմնված է լեզվի կառուցվածքի վրա: Սովորողը կրկնության միջոցով սովորում է առավելագույնս հաճախ օգտագործվող բառերն ու արտահայտությունները և դրանք անմիջապես օգտագործում պրակտիկայում: Այստեղ բանավոր խոսքը իշխում է գրավոր խոսքի վրա և առավելագույն ուշադրություն է դարձվում սխալների վրա, որոնք կարող են թույլ տրվել բանավոր խոսքի ընթացքում:

5. **Ուղղորդված պրակտիկա /փորձառություն/** (Directed practice)

Այս դեպքում սովորողն անընդհատ կրկնում է արտահայտությունները մինչև վերջիններիս մեխանիկորեն անգիր անելը: Այսպես տուժում է սովորողի բառապաշարն ու լեզվի ճկունությունը, սակայն հասնում ենք լեզվի հիմնային/ բազային/ արտահայտությունների ավտոմատ տիրապետմանը: Ինտերակտիվ մոտեցում. լեզուն հանդիսանում է սոցիալական հարաբերությունների ստեղծման ու հաստատման գործիք:

6. **Ուղղակի մեթոդ** (The direct method):

Նախատեսվում է, որ օտար լեզուն ուսուցանվում է մայրենի լեզվի նման, այսինքն ինքը, սովորեցնելու պրոցեսն անցկացվում է հենց օտար լեզվով, իսկ մայրենի լեզվի օգտագործումն այդ ընթացքում առավելագույնս բացառվում է: Մեթոդի գաղափարը օտար լեզվի «բնական» յուրացումն է, ինչպես մայրենի լեզվի դեպքում:

7. **Լռության մեթոդ** (Silent Way):

Այս դեպքում ուսուցիչն ավելի շատ լռում է, քան խոսում: Արտասանությունը սովորեցնելով տարրական դասարաններում, ուսուցիչն օգտագործում է տարատեսակ գունավոր աղյուսակներ, որտեղ ամեն մի գույնը կամ նշանը մի հնչյուն են նշանակում: Այս ճանապարհով էլ նոր բառեր են ուսուցանվում:

Խմբային նախագծի կազմակերպում

Ինչպես հայտնի է, նախագծերը լինում են անհատական և խմբային: Այժմ կդիտարկենք խմբային նախագիծը և անհատական ու խմբային նախագծերի առանձնահատկությունները: Խմբային նախագիծը թույլ է տալիս լուծել ինչպես մի շարք ուսումնական, այնպես էլ հատուկ դաստիարակչական խնդիրներ: Բացի այդ, խմբային նախագծի իրականացումն իրենից դժավարություն է ներկայացնում հենց դասավանդողի համար:Առաջին կարևոր և հիմնական դժվարությունը նախագիծն իրականացնող խմբի ձևավորումն է: Իդեալական խմբի անդամները պիտի լինեն ակտիվ, ինքնուրույն և պատասխանատու անձինք: Նրանք պետք է լինեն գաղափարներով հարուստ, բանիմաց, անընդհատ պրպտող, փնտրող, հետազոտող: Սովորողները պիտի կարողանան համագործակցել, ցուցաբերել ճկունություն և սկզբունքայնություն, հարգեն դիմացինի կարծիքը և հարկ եղած դեպքում հաստատակամորեն պնդեն իրենց կարծիքը և գնան փոխզիջման ՝ հանուն ընդհանուր նպատակի: Մի պահ, նույնիսկ, դժվար է պատկերացնել իրական դպրոցական իրավիճակ, որտեղ կարելի է իրագործել վերը նշված բոլոր պայմանները: Բայց եթե սովորողները նախագծեր իրականացնեն սկսած

հինգերորդ դասարանից, ապա ութ-իններորդ դասարաններում նրանք կկարողանան աշխատել խմբային նախագծերի վրա առանց դժվարությունների:

Խմբային նախագծերը նպատակահարմար են իրականացնել, երբ դասարանում կարիք կա ձևավորելու «կոլեկտիվ» հասկացությունը, երեխաներին սովորեցնելու համագործակցել միմյանց հետ: Սակայն խմբային աշխատանքի ժամանակ ոչ բոլոր սովորողներն են հնարավորություն ունենում ակտիվ և հավասար մասնակցություն ցուցաբերել աշխատանքի բոլոր փուլերում: Միշտ էլ ինչ-որ մեկը կատարում է հիմնական աշխատանքը, իսկ մյուսն անցնում երկրորդ պլան: Այդ իսկ պատճառով խմբային նախագծերի հետ համատեղ սովորողները պետք է իրենց ուժերը փորձեն նաև անհատական նախագծերով:

Եզրակացություն

Կրթության ոլորտը դիտարկվում է որպես երկրի կայուն զարգացման , մարդկային ռեսուրսի պահպանման ու վերարտադրման նախապայման:Կրթության ոլորտը ամենաբարդերից է, որն անընդհատ կատարելագործվելու կարիք ունի: ՏՀՏ- ի կիրառմամբ դասերի անցկացումը դասի արդյունավետությունը բարձրացնող միջոց է: Յուրաքանչյուր ուսուցիչ գիտակցում է ՏՀՏ-ի կիրառման կարևորությունը՝ այն հեշտացնում է թե՛ իր աշխատանքը, թե՛ աշակերտների՝ դարձնելով դասն ավելի մատչելի , հետաքրքիր, կիրառական և աշակերտակենտրոն:Այս դեպքում աշակերտը ոչ թե տեղեկատվության պասիվ ստացողն է, այլ հենց ինքն էլ կարող է փոխել, նաև ստեղծել ուսումնական բովանդակություն: Ուսուցիչն այս դեպքում խնայում է ժամանակ և հիմնարար, նորացված գիտելիք է տալիս աշակերտին:

Ինչ է ստանում ուսուցիչը ՏՀՏ-ի կիրառման միջոցով.

1. Դասաժամն օգտագործում է արդյունավետ :

2. Տեսնում է իր աշխատանքի արդյունքը:

3. Անընդհատ զարգանում ու կատարելագործվում է որպես մասնագետ, կիրառում է ժամանակակից մեթոդներ իր աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու , նոր հմտություններ ձեռք բերելու և միշտ ձեռքը զարկերակին պահելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Blaz D. Foreign Language Teacher's Guide to Active Learning. New York: Eye on Education, 1999.
2. Cook G. Translation in Language Teaching. Oxford: Oxford University Press, 2010.
3. Dorsch M. Second Language Acquisition vs. Second Language Learning. Germany: Grin Verlag, 2011.
4. Mukalel J.C. Approaches to English Language Teaching. New Delhi: Discovery Publishing House, 2005.
5. Nagaraj G. English Language Teaching: Approaches, Methods, Techniques. India: Orient Blackswan, 1996.
6. O'Malley J.M., Chamot A.U. Learning Strategies in Second Language Acquisition. Cambridge: Cambridge University Press, 1990.
7. Richards J.C. Methodology in Language Teaching: An Anthology of Current Practice // Richards J.C., Renandya W.A. (eds.) Cambridge: Cambridge University Press, 2002.
8. Siddiqui M.H. Techniques of Teaching Strategies. New Delhi: APH Publishing, 2009.
9. Smith F. Comprehension and Learning: A Conceptual Framework for Teachers. Holt, Rinehart and Winston, 1975.
10. Weltman D. A Comparison of Traditional and Active Learning Methods: An Empirical Investigation Utilizing a Linear Mixed Model. Arlington: University of Texas, 2007.
11. http://opencourses.uoa.gr/modules/document/file.php/ENL5/Instructional%20Package/Presentations/PDFs/Unit2_Accessible.pdf/
12. https://puzzle-english.com/
13. https://www.memrise.com/
14. https://www.busuu.com/en
15. https://www.britishcouncil.am/english
16. https://www.duolingo.com/